ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

***28 հուլիս 2023թ.***

***ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***ՏՆՕՐԵՆ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ***
***Ք.ԵՐԵՎԱՆ,ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 50 Շ. ԲՆ.2***

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

***Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ***

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և Արմեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2020թ. հոկտեմբերի 1-ին կնքվել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/12/01» ծածկագրով «Ծաղկունյաց հրապարակի հիմնանորոգման և հարակից փողոցների հենապատերի կառուցման աշխատանքներ»-ի կատարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետների երկարացմամբ վերջնական ժամկետ է սահմանվել 2022թ. նոյեմբերի 15-ը,սակայն մինչ օրս աշխատանքները չեն ավարտվել, իսկ կատարված աշխատանքներն էլ թերի են:

Պայմանագրի 3.1.4 կետի բ և դ ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,եթե

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պատվիրատուի կողմից 2022թ. նոյեմբերի 18-ին Կապալառուն ծանուցվել է Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը լրանալու, աշխատանքները չավարտվելու և կիրառվող տույժերի մասին:

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության,գյուղատնտեսության,բնապահպանության բաժնի կողմից ներկայացված չկատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագիրը և վերը նշված իրավական հիմքերը, թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/12/01» ծածկագրով պայմանագիրը համարում է միակողմանի լուծված՝ 57 014 710 /հիսունյոթ միլիոն տասնչորս հազար յոթ հարյուր տասը/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները,համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

Պատվիրատուն գնման ընթացակարգը միակողմանի լուծելու մասին որոշում կներկայացնի Լիազոր մարմին՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

7/28/2023

X

VERIFIED OCSP 28/07/2023 16:01:36 GMT+4

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Подписано: HARUTYUNYAN NAREK 2211860168

**ՆԱՐԵԿ**

Կատ.՝ Արփինե Ավետիսյան